## ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ

*2024-2025թթ. ուսումնական տարվա տնտեսագիտություն հոսքի 10-րդ դասարանի ընդունելության «Հայոց լեզու և գրականություն» առարկայից գիտելիքների ստուգման տոմսի նմուշ*

1. **Ո՞ր շարքի բառերում է ք գրվում /1միավոր/.**
   1. համ – երել, շամ – ուր, շա- աթ, ի –րև
   2. համ – ույր, նր – երանգ, սր – ագործել, հղ – անալ
   3. ար –շիռ, նր – ագեղմ, ջրար – ի, ուր – աթախոս
   4. ա – խազ, Գա – րիել, դա – նեվարդ, խա- ուսիկ

**2. Ո՞ր շարքի բառերում են բոլոր բաղադրիչները <u>միասին</u> գրվում /1միավոր/.**
   1. /ուշի/ուշով, /դյուր/ ընթեռնելի, /լույս /ընծայում
   2. /մուգ/կարմիր, /շին/վարչություն, վայր/ի/վերո
   3. /կես/կատակ, /գիտ/ քարտուղար, /ի/պաշտոնե
   4. /երգ/արվեստ, /օտար/երկրացի, /փոքրից/մեծ

**3. Ո՞ր շարքի բոլոր բաղադրայլ հատուկ անունների միայն երկրորդ բաղադրիչներն են <u>փոքրատառով</u> գրվում /1միավոր/.**
   1. ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈԽԱԿ, ՏԻԳՐԱՆ ՄԵԾ
   2. ԻՎԱՆ ԱՀԵՂ, ԼԱԶԱՐՅԱՆ ՃԵՄԱՐԱՆ, ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐՁՐԱՎԱՆԴԱԿ
   3. ԽԱՂԱՂ ՕՎԿԻԱՆՈՍ, ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ, ԳՈՒԳԱՐԱՑ ԱՇԽԱՐՀ
   4. ԳԵՂԱՄԱ ԼԵՌՆԵՐ, ԹՈՐՈՍ ՌՈՍԼԻՆ, ՍԵՎ ԾՈՎ

**4. Ո՞ր բառում <u>ու</u> ձայնավորի հնչյունափոխություն կա /1միավոր/.**
   1. սառցակալել
   2. հաշվետար
   3. չվացուցակ
   4. բնավեր

**5. Նշեցե՛ք այն բառը, որի մեջ կա <u>- ատ</u> վերջացանցը /1միավոր/.**
   1. պողպատ
   2. անաշխատ
   3. բացատ
   4. գթառատ

**6. Ո՞ր շարքի բոլոր բառերի հոգնակին է կազմվում <u>- ներ</u> վերջավորությամբ /1միավոր/.**
   1. քարայծ, կավագործ, կարմրախայտ, զինղեկ
   2. դյուրահավատ, նավթամուղ, կողմնացույց, հողաչափ
   3. գրագիր, հեռագրային, վիպագիր, քաղաքապետ
   4. հայրենասեր, թոնրատուն, հերթապահ, մատենագիր

**7. Ո՞ր շարքի բոլոր բառերն են ենթարկվում <u>ա</u> ներքին հոլովման /1միավոր/.**

1. անուն, ուրախություն, սյուն, աշուն
2. տուն, արյուն, հարություն, ձյուն
3. գարուն, եռանկյուն, մեծություն, շուն
4. հենասյուն, հացատուն, ամառ, բարություն

**8. Ո՞ր որակական ածականը համեմատության աստիճան ունի /1միավոր/**

1. կույր
2. ստերջ
3. ամուրի
4. ամուր

**9. Ո՞ր շարքի բոլոր բառազույգերն են հոմանիշներ /1միավոր/.**

1. շշունջ – փսփսոց, փորձանք – աղետ, անհողդողդ – անողոք
2. քնքուշ – նազելի, ազնվազարմ – բարձրատոհմիկ, թուլամորթ – մեղկ
3. քաջարի – աներկյուղ, վատահամբավ – տխրահռչակ, միամորիկ – զտարյուն
4. տարաշխարհիկ – օտարոտի, վաղեմի – հիմնավուրց, հարթ – ծանծաղ

**10. Տրվածներից ո՞րը մակբայ չէ /1միավոր/.**

1. դաժանորեն
2. սարեսար
3. ժայռակոփ
4. հերոսաբար

**11. Ո՞ր շարքի բոլոր բառերն են ձայնարկություններ /1միավոր/.**

1. հեյ, ախ քաշել, օh, անշուշտ
2. դեհ, ախուվախ անել, հեյ, օ
3. հռհռալ, խշշոց, վայ տալ, ա
4. հը, էյ, թըշշ, ծիվ-ծիվ

**12. Ո՞ր շարքում անցյալ կատարյալի սխալ ձև չկա /1միավոր/.**

1. թռավ, խոսեցրեցի, եկավ, զարկեցին
2. բերեցի, ասեցի, մտան, առան
3. նստացրին, հնչեց, մոռացան, չնվազեցին
4. կերան, եղավ, վազեցրին, դիպա

**13. Արտագրել և շարահյուսորեն վերլուծել տրված նախադասությունը (եթե կա դերբայական դարձված, դիտել որպես մեկ անդամ) /3 միավոր/.**

Հայ աստղագետները մանրազնին դիտարկում էին արհեստական արբանյակից ստացված տվյալները:

________________________________________________________________________

________________________________________________________________________

_____________________________________

**14. Հայոց դիցարանում ո՞վ էր դպրության աստվածը /1միավոր/.**

1. Արամազդ
2. Վանատուր
3. Նանե
4. Տիր

**15. «Սասնա ծռեր» էպոսում հայ ժողովրդի պայքարը ու՞մ դեմ էր ուղղված/1միավոր/.**

1. պարսիկների
2. թուրքերի
3. արաբների
4. ասորիների

**16. Հայոց ո՞ր թագավորն է մասնակցություն ունեցել գրերի ստեղծման գործին /1միավոր/.**

1. Տրդատ Երրորդ
2. Տիգրան Երկրորդ
3. Արշակ Երկրորդ
4. Վռամշապուհ

**17. Ավ. Իսահակյանը ո՞ր բանաստեղծության մեջ է արտահայտել հայրենիքի հավերժության գաղափարը՝ Արարատը համարելով մեր հինավուրց ժողովրդի գոյության վկան և խորհրդանիշը /1միավոր/.**

1. «Մեր պատմիչները և մեր գուսանները»
2. «Հայրենիքիս»
3. «Հայրենի հողը»
4. «Ռավեննայում»

**18. Ո՞վ է «Պեպո» կատակերգության հեղինակը, որի անունով էլ կոչվում է Երևանի մայր թատրոնը /1միավոր/.**

1. Շիրվանզադե
2. Լ. Շանթ
3. Հ.Պարոնյան
4. Գ. Սունդուկյան